ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2014թ. N ____- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2014 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.95-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Մամիկոնյանց փողոցի հ.41 շենքի հ. 6՝ 122.5քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 19.09.2011թ. հ.2727290 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Մուրադ Մուրադյանին և Նինել Ասատրյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Մամիկոնյանց փողոցի հ.41 շենքի հ.6 երեք սենյականոց բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահի պաշտոնը 1975-1985թթ զբաղեցրած, 2010 թվականին <<Սուրբ Մեսրոպ Մաշտոց>> շքանշանի արժանացած, <<Գյումրի-վերածնունդ>> բարեգործական–հասարակական կազմակերպության նախագահ, Փարիզ, Գյումրի և Երևան քաղաքների պատվավոր քաղաքացի Մուրադ Հովհաննեսի Մուրադյանին և նրա կնոջը՝ Նինել Արամի Ասատրյանին:

Քաղաքապետ Մուրադ Մուրադյանի պաշտոնավարման շրջանը Երևանի տարեգրության բաղկացուցիչ մասն է, հրաշալի տասնամյակ, որն աչքի է ընկել շինարարության մեծ ծավալներով՝ այդ թվում բնակարանային շինարարության, տնտեսության բոլոր ճյուղերում կատարված լուրջ տեղաշարժերով:

Հասարակական, պետական և քաղաքական գործիչ Մուրադ Մուրադյանն իր կյանքի տարիներն անցնելով հպարտ արժանապատվությամբ, անմնացորդ նվիրումով ծառայելով հայ ժողովրդին, աչքի ընկնելով իր ազնվությամբ ու բարությամբ այսօր նրա ընտանիքը կարիք ունի բնակարանային պայմանների բարելավման: Մուրադ Մուրադյանը կնոջ, թոռան և վերջինիս ամուսնու և երկու երեխաների հետ բնակվում է Բաղրամյան պողոտայի հ.53 շենքի հ.7 երեք սենյականոց բնակարանում: Մեկ բնակարանում երկու ընտանիքների համատեղ բնակության փաստը բացառիկ եռանդով և բազմակողմանի շնորհներով օժտված անձին, որը Երևանը համարում է մնայուն գերագույն արժեք և Երևանի յուրաքանչյուր նոր ձեռքբերում այսօր էլ նա ընկալում է որպես անձնական ուրախություն, աշխատանքային մեծ փորձը, հմտություններն ու կարողությունները փոխանցելու ունակ անձին զրկում է վաստակված հանգիստը լիարժեք վայելելու իրավունքից:

Հաշվի առնելով վերոհիշյալը առաջարկվում է նշված բնակարանը նվիրել նրան և կնոջը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ